

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 22/2

5 հունիսի 2012թ.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 19.10.2011թ-ի նիստում քննության է առնվել <Հայաստանի էլեկտրական ցանցեր> ՓԲԸ 27.09.2011թ-ի թիվ 05-ԵԲ.06/4832 գանգատը, ինչպես նաև 10.10.2011թ-ի թիվ 05-ԵԲ.06/5079 և 18.10.2011թ-ի թիվ 05-ԵԲ.06/5247 գանգատի լրացումները, ՀՀ ԿԱ ՊԵԿ խոշոր հարկ վճարողների ՀՏ 17.09.2011թ. թիվ 1012992 ստուգման ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է թիվ 55/1 որոշումը, որի համաձայն <Հայաստանի էլեկտրական ցանցեր> ՓԲԸ 27.09.2011թ-ի թիվ 05-ԵԲ.06/4832 գանգատի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կասեցվել է:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով ՀՀ ԿԱ ՊԵԿ խոշոր հարկ վճարողների ՀՏ 17.09.2011թ. թիվ 1012992 ստուգման ակտի դեմ բերված գանգատին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովին հասցեագրված 01.06.2012թ-ի թիվ 05-ԵԲ-06/2372 գրությամբ <Հայաստանի էլեկտրական ցանցեր> ՓԲԸ-ն հայտնել է, որ հրաժարվում է ՀՀ ԿԱ ՊԵԿ խոշոր հարկ վճարողների ՀՏ 17.09.2011թ. թիվ 1012992 ստուգման ակտի դեմ ներկայացված 27.09.2011թ-ի թիվ 05-ԵԲ.06/4832 գանգատից, ինչպես նաև միջնորդել է <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի <բ> ենթակետի հիմքով կարճել դրա հիման վրա հարուցված վարչական վարույթը:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի <բ> ենթակետի համաձայն. <Դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե դիմողը գրավոր ձևով հրաժարվում է իր դիմումից>:

Հանձնաժողովը, հիմք ընդունելով <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի <բ> ենթակետի և 51-րդ հոդվածի դրույթները գտնում է, որ Հանձնաժողովի 19.10.2011թ-ի թիվ 55/1 որոշմամբ կասեցված վարչական վարույթը ենթակա է նախ վերսկսման, ապա՝ կարճման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 19.10.2011թ-ի թիվ 55/1 որոշմամբ կասեցված վարչական վարույթը վերսկսել:

2. <Հայաստանի էլեկտրական ցանցեր> ՓԲԸ 27.09.2011թ-ի թիվ 05-ԵԲ.06/4832 գանգատի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կարճել:

Հանձնաժողովի նախագահ



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ